

*Claude Mutafian, LE ROYAUME ARMÉNIEN DE CILICIE XII—XIV SIECLE, avec la collaboration de Catherine Otten, Lilita Zakarian, Krikor Chahinian, et le concours exceptionnel de S. S. Karekine II, Catholico de la Grande Maison de Cilicie. Preface de Levon Ter-Petrossian, President de la Republique d'Arménie. Paris, 1993, 157 p.*

Կլադ Մուֆաֆյան, ԿիլիկիԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ XII—XIV ԴԱՐԵՐՈՒՄ, Աշխատակցությամբ Ք. Օթենի, Լ. Զաքարյանի, Գ. Շահինյանի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի, առաջաբանը՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, Փարիզ, 1993, 158 էջ:

1993 թ. հոկտեմբերի 28-ին Սորբոնի համալսարանի մատուցում բացված «Կիլիկիայի հայկական թագավորությունը» ցուցահանդեսը նշանակալի երևույթ էր հայ-ֆրանսիական մշակութային փոխհարաբերությունների բնագավառում: Յուզահանդեսին ներկայացված էին Կիլիկիայի մշակույթին և պատմությանը վերաբերող բազմաթիվ ցուցահանդեսներ, որոնք Արմեն Մուսաֆյանի շանթերով բերվել էին աշխարհի տարբեր գրադարաններից ու ու թանգարաններից: Կիլիկիայի պատմության մասնագետի ու հետաքրքրասեր այցելուի համար դա մի բացառիկ առիթ էր առարկայորեն պատկերացնելու այն Կիլիկիան, որը եղևու հարյուր տարուց ի վեր նյութ է դարձել գիտական հետազոտությունների: Արմեն Մուսաֆյանն իր հեկայական համբերության, եռանդի և արդյունավետ պրպտումների շնորհիվ կարողացավ կյանք տալ այդ առարկաներին, որոնց մասին տեղեկությունները ցրված էին տարբեր գրքերում և տարբեր լեզուներով լույս տեսած հետազոտություններում: Այդ նյութերից է ծնվել «Կիլիկիայի հայկական թագավորությունը» աշխատությունը, որն ամբողջացնում է Կիլիկիայի պատմությանը վերաբերող մեր գիտելիքներն ու իրար է շարկապում և խոսեցնում թանգարանում ցուցադրված մինչև այժմ համար նյութերը:

Գրախոսվող գրքի հրատարակությունը կայացել է ֆրանսիական գրքի ազգային կենտրոնի և Գալուստ Կյուպենկյան հիմնադրամի շնորհիվ. հրատարակիչն է Ֆրանսիայի Գիտական Հետազոտությունների Ազգային Կենտրոնը (CNRS):

Կարճ նախաբանում հայագետ-ասորագետ Լ. Տեր-Պետրոսյանը հիմնական գծերով ներկայացնում է Կիլիկիայի հայկական թագավորության պատմության և մշակույթի առանձնահատկությունները, շփումները հարևան քաղաքակրթությունների, հատկապես եվրոպական աշխարհի հետ:

Հաջորդ չորս գլուխները կաղմում են ողջ գրքի առանցքը: Այստեղ Արմեն Մուսաֆյանը հանրամատչելի շարագրանքով ընթերցողին է մատուցում Կիլիկիայի հարուստ պատմությունը՝ սկսելով հստակ աշխարհագրական նկարագրությունից, Մեծ Հաքի թագավորության հետ ունեցած առնչություններից և հայ բնակչության՝ այդ տարածաշրջանում հայտնվելուց: Առաջին երեք գլուխներում հեղինակը Կիլիկիայի պատմությունը տալիս է կրկն ժամանակագրական փուլերով:

ա) Իշխանապետության շրջան (1097—1198),

բ) Երեք գործող տիրակալների դարաշրջան (1198—1289),

գ) Թագավորության անկման ժամանակաշրջան (1289—1375):

Հիշատակված երեք գլուխներին հետևում է աճանապարհորդների վկայությունները բաժինը, ուր հեղինակը հմտորեն միահյուսել է ժամանակակից եվրոպական ուղեգիրների տեղեկությունները և ստեղծել մուսուլմանական երկրների տիրապետության ներքո Կիլիկիայում հայկական մշակույթի գոյատևման պատմությունը՝ ներառյալ մինչև ֆրանսիական զորքերի հեռացումը (1939 թ.) տարածաշրջանից:

Աշխատանքի վերահիշյալ գլուխներում համաշխարհային պատմության լայն հետախորդի վրա, նյութն ընթերցողին հասցնելու վարպետությամբ հեղինակը ներկայացնում է Կիլիկիայի ողջ անցյալը, երևման ուղղակի, երբևէ անուղղակի խոսեցնելով շարագրանքն ընգծիչող հաղվագուտ վավերագրերը, կնիքներն ու դրամները, քարտեղներն ու լուսանկարները, որոնց մեծ մասը դարդարում էին նաև Սորբոնի մատուցի ցուցահանդեսը:

Պատմությունն այստեղ ներկայացված է իր ամբողջության մեջ և թվում է, թե ոչինչ չկա ավելացնելու, ընթերցողին ծանրաբեռնելու ավելորդ փաստերով ու փաստարկներով: Գրա հետ մեկտեղ հեղինակն իր շարադրանքում չի հանդուրժում որևէ շեղում պատմական ճշմարտությունից, և զբոսում դժվար է գտնել որևէ լուրջ վրիպում կամ սխալ: Իհարկե կարելի է վիճել, թե Քորոս Բ-ն ո՞ր թվականին է իշխանական դահ րարձրացել, կամ ե՞րբ է տեղի ունեցել Հոռմ-կլայի եկեղեցական ժողովը և Լեոն Ա-ի թագադրումը, սակայն միանգամայն պարզ է, ոտ ընթերցողն այդ հարցերի լուծումը չի էլ սպասում այս գրքում: Նրան հետաքրքրում են առինքնող իրադարձությունների նկարագրություններ և պատմական հուշարձաններին վերաբե-րող տեղեկություններ, որոնք լիուլի և նուրբ ճաշակով հրամցվում են ընթերցողին:

Այս տեսանկյունից գիրքն ավելի գրավիչ կդառնար, եթե հեղինակը ներկայացնե՛ր նաև Կիլիկիայի հայկական թագավորության հասարակական կյանքը, արքունիքի խաչադրված կազմը, Կիլիկիայի արքայական ընտանիքի վիճակը համեմատության մեջ գնել հարեան երկրը-ներում իշխող հարստությունների հետ, փորձեր տալ ազնվական և զինվորական դասերի կա-ռուցվածքը, քաղաքային ու գյուղական բնակչության, ինչպես նաև հոգևորականության խա-ղացած գերը երկրի տնտեսական, հասարակական և հոգևոր կյանքում:

Հայտնի է, որ մինչև 1293 թ. հայոց կաթողիկոսները փորձում էին որքան կարելի է իրենց հետև պահել թագավորական մայրաքաղաք Սասից ե այս առումով արժեք ներկայացնել այդ ներքին, արտաքինից գրեթե շերտացող հակամարտությունը, որը ժամացույցի պիտկ զբա-պանակի նման երբեմն ուղեկցում էր հոգևոր և աշխարհիկ աթոռների փոխհարաբերություն-ներին: Արժեք նաև անգրագառնալ Կիլիկիայի միապետների որդեգրած և գրքում հրապարակված վավերագրերով հավաստվող ռևանչայն հայոց թագավոր տիտղոսին և արժեքավորել զրա նշանակությունը ժամանակի քաղաքական փոխհարաբերություններում:

Մեր կարծիքով արդարացված չէ ներսևս Լամբրոնացուն միանշանակ լատինասեր պիտա-կումը, քանի որ պահպանված մատենագրական երկերում նա ավելի շատ հունասերի հանդե՛ր-ձով է երևում, քան՝ լատինասերի: Այս դեպքում չպետք է անտեսել Լամբրոնի Հեթումյանների քաղաքական կենցաղը և թագավորի կողմից հատկապես Տարսուսի եպիսկոպոսի ընտրությունը Կոստանդնուպոլիս տեղափոխելու և հույների հետ բանակցելու խնդրում: Այս հարթության վրա հետաքրքիր կլինե՛ր նաև հիմնական գծերով ներկայացնել Հյուսիսային Հայաստանի և Կիլիկիայի կղերականների պայքարը, որը մերթ ընդ մերթ անհաշտ քաղաքական պայքարի բնույթ էր ստանում:

Նշված հարցադրումների շարքը գուցե հնարավոր է լրացնել, սակայն պարզ է, որ գրքում պատմարանի հստու գրչով են ներկայացված հրապարակի վրա դրված հարցադրումները և որևէ ավելորդ խոսք չի սպրդել շարադրանքի մեջ: Հեղինակը երկրամասի պատմությանը հե-տևում է քննադատ ժամանակագրի հայացքով, որը փորձում է պահպանված, երբեմն անտե-սանելի բեկորներից հյուսել դարաշրջանի եղևությունների իրական պատկերը: Այս տեսանկյու-նից աշխատանքին պատմական հավաստի արժեք են տալիս Կիլիկիայով անցած ճանապար-հորդների հյուսիսի նկարագրությունները, որոնք ամենահարմար առիթներով օգտագործում է Արմեն Մուլաֆյանը:

Ձրաղաքակրթությունն աեուը կրող գլուխը գրված է տարբեր հեղինակների կողմից: Ավելի ամբողջական կլինե՛ր, եթե առանձին հատվածներ նվիրվեին Կիլիկյան Հայաստանի դրամ-ներին և կնիքներին, դիանշաններին, գրչության կենտրոններին, թարգմանական մատենագրու-թյանը, ճարտարապետությունը և երաժշտությունը: Տարօրինակ է, որ գրականության բնագավա-ռում ներկայացված են միայն շորս հեղինակ, որոնց վերաբերող շարադրանքը լիարժեք պատ-կերացում չի տալիս Կիլիկիայում ստեղծված բազմաբնույթ մատենագրության մասին: Գրիգոր Շահինյանը հավանաբար տեղի լզույթության պատճառով չի անդրադարձել Գրիգոր Գ Տղայի,՝ ներսևս Լամբրոնացու, Մխիթար Սկեռացու, ներսևս Պալիանենցի և ուրիշների երկերին, չի փորձել արծաթեղարյան և գրան հաշորդող մատենագրական ժառանգության մեջ զատորշել տարբեր քաղաքական և գրական հոսանքներն ու ուղղությունները, որոնք իրենց կնիքն են դրել ողջ միջնադարյան հայկական մշակույթի վրա: Գրքի այս հատվածը հատկապես թերի է, քանի որ հեղինակը շրջանցել է թարգմանական հուշարձանները, որոնք վերաբերում են գիտե-լիքների գրեթե բոլոր բնագավառներին և լրջորեն աղգել են Կիլիկիայում հասարակական մտքի ձևավորման վրա:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն (այժմ՝ Ամենայն հայոց կաթողիկոս) կարողացել է սահմանափակ էջերում ներկայացնել Հոռմկլայում հաստատված Հայոց կաթողի-կոսների եկեղեցական քաղաքականությունը հարեան համայնքների հետ և քննարկել այն հիմ-

նական դավանաբանական հարցերը, որոնք գայթակղության քար էին դարձել հույն, ասորի, լատին և հայկական եկեղեցու փոխհարաբերություններում: Գիտնականը ներկայացնում է XII—XIV դդ. Հայոց եկեղեցու պատմության իրադարձությունները եկեղեցիների միության շարժման տեսանկյունից, որի գաղափարախոսական հիմքերը գրվել էին դեռևս XII դարում, ներսես Շնորհալի կաթողիկոսի կողմից վարչող բանակցություններում:

Չկա սիրով և նվիրումով կատարված որևէ իսկական աշխատանք, որի ընթացողը շքանկանա ալն ավելի կատարյալ տեսնել: Այդ իսկ պատճառով պետք է շնորհակալ լինել հեղինակների խմբին և հատկապես Արմեն Մուրաֆյանին, որը ժամանակի դատին է հանձնել մի աշխատանք, որի գրեթե ամեն էջը ճաշակի, արվեստի ու գիտական բարեխղճության միաձուլ կառույց է:

Սրան պետք է աչքից հանել, որ գրքին մեծ արժեք են տալիս առաջին անգամ հրատարակվող կնիքները, առևտրական համաձայնագրերի բնագրերի և մանրանկարների բնօրինակին մոտեցող լուսանկարները: Քեզ կիրիկիսյում ես պատկերացնում, երբ տեսնում ես կլոդ Բուրիեի և Ստեփան Բեռնարի լուսանկարները, որոնք արված են այս գրքի համար՝ 1993 թ. մայիսին: Գրքի բովանդակության հետ համահունչ են Հովհաննես Խաչիկյանի և Ժան-Լյուկ Պոթիևի ստեղծած բարձրաճաշակ քարտեզները: Իսկ վերջում գրված ժամանակագրական տախտակը, անվանացանկը և ընտրովի մատենագիտությունը ապահովում են աշխատանքի գիտական պահանջները:

Ա. Ա. ՌՈՂՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր